

## ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/8  
20 փետրվարի 2018թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռազմիկ Գուլյանի միջնորդությունը՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելը հարգելի համարելու վերաբերյալ:

#### Ա/Ձ Ռազմիկ Գուլյանի բերված փաստարկները.

Ա/Ձ Ռազմիկ Գուլյանը հայտնում է, որ աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով 2018թ. հունվարի 10-ին գրանցվել է պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում: Որպես արհեստավոր պետք է կատարի բնակչության պատվերով կահույքի պատրաստում, արտադրություն և վերանորոգում և պատրաստ է գործունեությունից առաջացող պարտավորությունները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 4 բաժնից ստացվել է ծանուցագիր շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, սակայն այդ ժամանակ Ա/Ձ Ռազմիկ Գուլյանը եղել է վատառողջ:

Ա/Ձ Ռազմիկ Գուլյանը կարծել է, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը պետք է ներկայացվի մինչև փետրվարի 20-ը, որի մասին նշված է ծանուցագրում:

Ա/Ձ Ռազմիկ Գուլյանը խնդրում է որպես իրեն համարել շրջանառության հարկ վճարող, քանի որ ի վիճակի չի լինի վճարել ԱԱՀ-ի նախատեսված պարտավորությունները և ստիպված կլինի դադարեցնել գործունեությունը:

#### ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ռազմիկ Գուլյանը, որպես անհատ ձեռնարկատեր, 2018թ. հունվարի 10-ին ստացել է պետական գրանցում:

2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար Ա/Ձ Ռազմիկ Գուլյանը պետք է պետական գրանցումից հետո 20 օրյա ընթացքում հարկային մարմին ներկայացներ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն վատառողջ լինելու, իչպես նաև շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու ժամկետը շփոթելու հետևանքով, նրա կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Այսպես, ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես

կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Իր հերթին, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերի և մինչև տվյալ հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերի համար սահմանված են շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու տարբեր ժամկետներ: Մասնավորապես, տվյալ հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերի համար այդ ժամկետն է՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ռազմիկ Գուլյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու ժամկետը բաց է թողնվել թյուրիմացության հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

#### **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Ա/Ձ Ռազմիկ Գուլյանի միջնորդությունը բավարարել:
2. Ա/Ձ Ռազմիկ Գուլյանի կողմից մինչև 20.02.2018թ. սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում ընկերությանը համարել շրջանառության հարկ վճարող:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**